

Վարչապետը ներկա է գտնվել Հայ-ռուսական միջտարածաշրջանային 4-րդ համաժողովի բացմանը

3-րդ նոյեմբերի, 2015 թ.

<http://www.gov.am/am/news/item/12201/>

Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովիկ Աբրահամյանն այսօր Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հետ «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում մասնակցել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային 4-րդ համաժողովի պաշտոնական բացմանը: Համաժողովն անցկացվում է «Հայաստան-Ռուսաստան. Եվրասիական տնտեսական միություն. միջտարածաշրջանային համագործակցության նոր հեռանկարներ» խորագրի ներքո:

Մինչ աշխատանքներն սկսելը համաժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք են մատուցել հոկտեմբերի 31-ին Շարմ Էլ-Շեյխից Սանկտ Պետերբուրգ ուղևորված ինքնաթիռի վթարի և նոյեմբերի 3-ին Տուլայի տարածաշրջանի Ուզլովսկի մոտ Մոսկվայից Երևան եկող ավտոբուսի վթարի պատճառով զոհվածների հիշատակին: Հայ-ռուսական միջտարածաշրջանային 4-րդ համաժողովի մասնակիցներին ողջունի ուղերձ են հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: ՀՀ նախագահի ուղերձն ընթերցել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, ՌԴ նախագահի ուղերձը՝ ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն: Ապա ողջունի խոսքով են հանդես եկել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը և ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն:



Ողջունելով Հայ-ռուսական միջտարածաշրջանային 4-րդ համաժողովի մասնակիցներին և հյուրերին՝ կառավարության ղեկավարը նշել է. «Համաժողովի պարբերական անցկացումն արդեն լավ ավանդույթ է դարձել: Տարածաշրջանների ղեկավարներին, գործարար աշխարհի, հասարակական, գիտական և ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչներին համախմբող այս ֆորումը դարձել է արդյունավետ հարթակ մեր երկրների դաշնակցային փոխգործակցության միջտարածաշրջանային մակարդակով հարցերի ամենալայն շրջանակի բաց քննարկումների համար:

Կցանկանայի ընդգծել, որ այս միջոցառումները ոչ թե ֆորմալ, այլ գործնական բնույթ են կրում: Միջտարածաշրջանային կապերի ամրապնդումը նպաստում է գործնական հարցերի լուծմանը, խթանում ներդրումների ներգրավումը և նորարարությունների աճը: Կարող ենք փաստել, որ մեր համագործակցությունն այս ձևաչափով կայացել է: Արդիական է նաև համաժողովի առանցքային թեմայի ընտրությունը՝ «Հայաստան-Ռուսաստան. Եվրասիական տնտեսական միություն. միջտարածաշրջանային համագործակցության նոր հեռանկարներ»: Տնտեսական միությունը բազմապատկեց մեր երկրների ընդհանուր ներուժը, և նրա աշխատանքը հնարավորություն է տալիս վերացնել շատ խոչընդոտներ փոխշահավետ տնտեսական համագործակցության համար: Գրեթե մեկ տարի գործող Եվրասիական տնտեսական միությունն իրեն դրսևորել է որպես խոստումնալից ինտեգրացիոն միավորում, որն ունի աշխատուժի, ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման մեծ ներուժ: Մեր ինտեգրացիոն կառույցներն անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում առևտրատնտեսական կապերի հետագա ակտիվացման և ամրապնդման համար, բայց մենք ևս պետք է խթանենք ոչ միայն շրջանակային համաձայնագրերը, այլև կոնկրետ նախաձեռնությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհրաժեշտ ուշադրություն է դարձնում միջտարածաշրջանային կապերի զարգացմանը, հատկապես փոքր ու միջին տնտեսվարող սուբյեկտների միջև շփումների հաստատմանը: Այսօր մեր առջև ծառայել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ազգային տնտեսությունների արդիականացումն ու մրցունակության բարձրացումը, մարդկանց կյանքի որակի բարելավումը: Վստահ եմ, որ միջտարածաշրջանային մակարդակով արդյունաբերական գործակցության և առևտրի ակտիվացումը, ինչպես նաև կրթության, մշակույթի, սպորտի և զբոսաշրջության զարգացման ոլորտներում կապերի ընդլայնումը հետագայում նույնպես կնպաստեն մեր պետությունների ռազմավարական գործընկերության ամրապնդմանը:

Այս տարի ավելացել է գյուղատնտեսական ապրանքների արտահանումը Ռուսաստան, ինչը վկայում է ռուսաստանյան շուկայում մեր արտադրանքի պահանջված լինելու մասին: Այս միտումը պահպանելու համար պետք է ամեն կերպ զարգացնենք լոգիստիկան և փոխադարձ ներդրումները, ավելի բարենպաստ պայմաններ ստեղծենք բիզնեսի համար: Հենց այդ նպատակով էլ հանդես եկանք ԱԱՀ վերադարձման պարզեցված մեխանիզմների ներդրման նախաձեռնությամբ:

Համաժողովի օրակարգում հատուկ ուշադրության է արժանացել նաև էներգետիկ համագործակցությունը: Ներկայիս պայմաններում անհրաժեշտ է բարձրացնել տնտեսությունների էներգետիկ արդյունավետությունը և զարգացնել այլընտրանքային աղբյուրները, ինչպես նաև մտածել ազգային փոխարժեքով էներգետիկ ռեսուրսների առևտրի շուրջ, ինչն զգալիորեն կնվազեցնի անկայունությունը մեր երկրների ներքին

շուկաներում:

Համաժողովը պատշաճ ուշադրություն է դարձնում նաև հումանիտար ոլորտում համագործակցությանը, որը հատկապես կարևոր է մեր եղբայրական երկրների համար: Կարծում ենք, որ միջտարածաշրջանային համագործակցության շրջանակում բավական բարձր է շարունակում մնալ զբոսաշրջության ոլորտում չիրացված ներուժի մասնաբաժինը: Այդ նպատակով մենք արդեն հանդես ենք եկել առաջարկությամբ, որպեսզի Ռուսաստանի քաղաքացիները ներքին անձնագրերով կարողանան Հայաստան այցելել:

Ավարտելով խոսքս՝ մաղթում եմ բոլորին բեղմնավոր աշխատանք, իսկ տարածաշրջաններին՝ հետագա հաջողություններ ի շահ Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների: Վստահ եմ՝ ինչպես և նախորդ համաժողովները, այս համաժողովը ևս կոնկրետ արդյունքներ կարձանագրի ի նպաստ մեր երկրների և ժողովուրդների»:

Այնուհետև Հովիկ Աբրահամյանի և Վալենտինա Մատվիենկոյի ներկայությամբ ստորագրվել են տարբեր ուղղություններով երկկողմ համագործակցության զարգացմանը վերաբերող մի շարք փաստաթղթեր՝ ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Արխանգելսկի նահանգի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության 2012 թ. համաձայնագրի իրագործման 2015-2017 թթ. միջոցառումների ծրագիրը, «Զարգացման միջպետական կորպորացիա» ԲԲԸ և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի միջև համատեղ գործունեության համաձայնագիրը, ՀՀ և ՌԴ բարձրագույն կրթության ուսումնական հաստատությունների ասոցիացիայի ձևավորման մտադրությունների մասին հուշագիրը և «Մոսկվորեցկի Առևտրի տուն» ՍՊԸ և «Հայաստանի ջերմոցային ասոցիացիա» գյուղատնտեսական ՀԿ միջև համագործակցության մասին հուշագիրը:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովն անցկացվում է 2011 թվականից ՀՀ և ՌԴ նախագահների աշխատակազմերի աջակցությամբ՝ հնարավորություն տալով որակական նոր մակարդակի բարձրացնել երկկողմ հարաբերությունների միջտարածաշրջանային ձևաչափը: Ֆորումի նպատակն է՝ քննարկել տարբեր ոլորտներում համագործակցության խորացմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր, նպաստել ՀՀ մարզերի և ՌԴ տարածաշրջանների միջև համագործակցության ներուժի բացահայտմանը և նոր կապերի հաստատմանը: Միջտարածաշրջանային համագործակցության մեջ ներգրավված են ՀՀ բոլոր մարզերը, ՌԴ ավելի քան 70 դաշնային միավորներ: Նախկին համաժողովներից հետո կապեր են հաստատվել ՀՀ Վայոց ձորի մարզի ու ՌԴ Արխանգելսկի նահանգի, ՀՀ Լոռու մարզի ու «Հարավկոսովկասյան երկաթուղի» ընկերության միջև, քննարկվում են ՀՀ Սյունիքի մարզի և ՌԴ Վոլգոգրադի նահանգի, ՀՀ Արարատի մարզի և ՌԴ Ռոստովի նահանգի միջև համագործակցության հնարավորությունները: Համաժողովին մասնակցում են պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, տարբեր գերատեսչությունների, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ:

ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Կայացավ հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության 4-րդ համաժողովը

3-րդ նոյեմբերի, 2015 թ.

<http://mta.gov.am/hy/news/item/2015/11/03/789/>

Նոյեմբերի 3-ին Երևանում անցկացվեց «Հայաստան-Ռուսաստան. Եվրասիական տնտեսական միություն. Միջտարածաշրջանային համագործակցության նոր հեռանկարներ» խորագրով 4-րդ համաժողովը:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը: Ռուսաստանը ներկայացնում էին ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկո, ՌԴ տնտեսական զարգացման փոխնախարար Ալեքսանդր Ցիբուլսկին և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:



Համաժողովի նպատակն էր քննարկել տարբեր ուղղություններով համագործակցության խորացման ու զարգացման հարցերը, նպաստել երկու երկրների միջև միջտարածաշրջանային մակարդակով համագործակցության ներուժի ամբողջական բացահայտմանը և նոր կապեր հաստատել ՀՀ և ՌԴ տարբեր օղակների միջև: Համաժողովին ներկա էին նաև երկու երկրների պետական կառույցների, գործադիր իշխանության տարածքային մարմինների, տարբեր գերատեսչությունների, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ:

Համաժողովի սկզբում մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Շարմ Էլ-Շեյխ-Սանկտ Պետերբուրգ չվերթն իրականացնող ինքնաթիռի կործանման և Մոսկվա-Երևան երթուղու ավտոբուսի պատահարի զոհերի հիշատակը:

ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը համաժողովի մասնակիցներին փոխանցեց Նախագահ Ս. Սարգսյանի ողջույնի խոսքը: Հնչեց նաև ՌԴ նախագահ Վ. Պուտինի ողջույնի ուղերձը:

ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վ. Մատվիենկոն իր խոսքում նշեց, որ նման միջոցառումները դարձել են կարևոր հարթակ՝ առողջ երկխոսություն ձևավորելու և կուտակված մեծ փորձը փոխանակելու համար: Նա կարևորեց նաև այն հանգամանքը, որ ՌԴ բոլոր դաշնային միավորները ձգտում են ակտիվ կապեր հաստատել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տարածքային մարմինների հետ: Վ. Մատվիենկոն կարևորեց երկու ժողովուրդների փոխադարձ խոր հարգանքը, ամուր կապերը մարդասիրական, գիտակրթական և տեխնոլոգիական ոլորտներում:

ՀՀ վարչապետ Հ. Աբրահամյանն ընդգծեց, որ միջտարածաշրջանային այս համաժողովը համագործակցության հարցերի գործնական քննարկման և իրագործման հարթակ է: Նա նշեց, որ ՀՀ կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում միջտարածաշրջանային համագործակցության զարգացմանը, քանի որ այն ընդգրկում է սոցիալ-տնտեսական, էներգետիկ, ներդրումային, գիտական, կրթական, մշակութային, մարդասիրական և այլ ոլորտներ: Վարչապետի խոսքով՝ այս ֆորումը մեծապես կնպաստի հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը:

ՏԿԱԻ նախարար Ա. Երիցյանը, ողջունելով հյուրերին, ՀՀ կառավարության և ՏԿԱԻ նախարարության անունից շնորհակալություն հայտնեց համաժողովի կազմակերպման գործում ներգրավված բոլոր կողմերին: Ըստ նախարարի՝ սա նաև հայ-ռուսական հարաբերություններում առկա մեծ ձեռքբերումների ապացույցն է:

- Միջտարածաշրջանային փոխգործակցությունը մեծ դեր է խաղում երկկողմ հարաբերությունների զարգացման հարցում՝ նոր խթան հաղորդելով հայ-ռուսական բազմակողմանի հարաբերություններին: Այն նպաստում է ռազմավարական, տնտեսական, մարդասիրական ասպարեզներում փոխգործակցության զարգացմանը: Այս ֆորումը կարևոր է նաև այն առումով, որ կարող է նպաստել երկու պետությունների միջև վստահության բարձրացմանը, և թույլ կտա փոխանակել հարուստ փորձը, նոր գաղափարները, գիտական մշակումներն ու նորարարական ձեռքբերումները, - եզրափակեց Ա. Երիցյանը:



Համաժողովի ընթացքում հայկական և ռուսական կողմերի միջև ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր՝ համագործակցային նոր հեռանկարների վերաբերյալ: Կազմակերպված մամլո ասուլիսի ընթացքում ՏԿԱԻ փոխնախարար Վաչե Տերտերյանը և ՌԴ տարածքային զարգացման փոխնախարար Ալեքսանդր Ցիբուլսկին պատասխանեցին լրագրողների հարցերին:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովներն անցկացվում են 2011 թ.՝ Հայաստանի և ՌԴ-ի նախագահների աշխատակազմերի աջակցությամբ: Քննարկված թեմաները վերաբերում են փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության, էներգետիկայի, հեռահաղորդակցության և կապի, նոր տեխնոլոգիաների, մշակույթի և կրթության ոլորտներին: Առաջին համաժողովի արդյունքների ամփոփումից հետո ձևավորվել է աշխատանքային խումբ, որի խնդիրը միջտարածաշրջանային համագործակցության խորացման հետ կապված հարցերի քննարկումն ու կողմերին համապատասխան առաջարկությունների ներկայացումն է:



Համաժողովը բացառիկ հնարավորություն է ընձեռում Հայաստանի մարզերի ու ՌԴ ռեզիդենտների միջև համագործակցության առկա հնարավորությունների ամրապնդման ու նոր հեռանկարների հաստատման համար, թույլ է տալիս որակական նոր մակարդակի բարձրացնել երկկողմ հարաբերությունների միջտարածաշրջանային ձևաչափը: Նախկին համաժողովներից հետո կապեր են հաստատել ՀՀ Վայոց ձորի ու ՌԴ Արխանգելսկի մարզերը, Լոռու մարզն ու «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը, քննարկվում են Սյունիքի և Վոլգոգրադի, Արարատի ու Ռոստովի մարզերի համագործակցության հնարավորությունները: Միջտարածաշրջանային համագործակցության մեջ ներգրավված են ՀՀ բոլոր մարզերը, ՌԴ ավելի քան 70 դաշնային միավոր:

ՀՀ ՏԿԱԻՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն